յայտնեսցի բարին և չարն, սովաւ ծանիցէ ամենայն բնութիւն մարդւոյ հարկս իւր և համախոհ հնազանդելով Օրինաց իւրեանց՝ ընթանասցէ ուղղակի կանն իրաւանց և արդարութեանց, և կառաւարիչն կալով մնասցէ առանց տեղի բամբասանաց և այլն։

Երկայնամիտ լերուք բարեկամք, զի այսօր ազգն Հայոց իբր բոլորովին անկեալ կայ 'ի լծորդութիւն ծառայութեան այլ ազգաց, որ ոչ ոք 'ի մէնջ ունի ոչ զօրութիւն և ոչ իրաւունս զի ջանասցէ պարծիլ 'ի վերայ եղբօր և կամ դրացու և կամ 'ի վերայ բոլոր ժողովրդոց, և ոչ ոք 'ի մէնջ այսօր գտանի ինքնակալ Տէր որ 'ի պատճառէ և իշանելոյ նմայ ինքնակալութենէ իւրմէ և մտանելն ընդ լծաւ օրինաց խռովեսցի անձն իւր, և 'ի պատճառէ խռովութենէ միաբանեսցի ընդ Յունս և Պարս և ածցէ հարուած 'ի վերայ աշխարհին մերոյ, որպէս բազմիցս եղև առաջնում. ոչ ոք 'ի մէնջ մնաց ազնիւ 'ի արենէ, եթէ գուցէ գտցի նա ևս անծանօթ 'ի մէնջ, և ոչ իշխան 'ի սեպհականութենէ և կամ գաւառատէր 'ի ստացուածոց իւրոց ժառանգութենէ, այլ ամենեքեան միաբան և միախոհ եղաք մշակ այլ ազգաց վաստակելով յերեսս յերկրին մերոյ, իբրև անասուն և անբան. վասն որոյ որում կարգ և սահման որ այժմոյս հաստատի վասն հասարակաց բարութեանց ոչ ումեք նեղի և ոչ ումեք